**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Հոդված 7. Վարչապետը**

1. Վարչապետը Կառավարության ծրագրի շրջանակներում որոշում է Կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, որոնք պարտադիր են Կառավարության անդամների համար:

2. Վարչապետը ղեկավարում է Կառավարության գործունեությունը և համակարգում է Կառավարության անդամների աշխատանքը:

3. Վարչապետը հետևում է Կառավարության ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացմանը:

4. Վարչապետն ապահովում է Կառավարության գործունեության միասնականությունը:

5. Կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով վարչապետն ընդունում է որոշումներ, ինչպես նաև տալիս է հանձնարարականներ:

5.1. Վարչապետի որոշումներն ստորագրում է վարչապետը: Վարչապետի որոշման հավելվածն ստորագրում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը՝ դրանով հաստատելով, որ տվյալ հավելվածը վարչապետի ընդունած տարբերակն է:

6. Վարչապետն իր որոշմամբ սահմանում է յուրաքանչյուր փոխվարչապետի կողմից համակարգվող՝ Կառավարության գործունեության ոլորտները:

7. Վարչապետն իրավասու է ընդլայնելու նախարարության գործունեության ոլորտները:

8. Վարչապետը նախարարի առաջարկությամբ սահմանում է փոխնախարարների թիվը, նշանակում է փոխնախարարներին, բացառությամբ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի ղեկավարի՝ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող տեղակալների, հաստատում է նախարարությունների կանոնադրությունը և սահմանում է աշխատողների քանակը:

9. Վարչապետը ձևավորում է իր աշխատակազմը, որի խնդիրն է ապահովել վարչապետի և փոխվարչապետների լիազորությունների իրականացումը, այդ թվում՝ Կառավարության նիստերի անցկացումը: Վարչապետի աշխատակազմի ղեկավարին նշանակում և ազատում է վարչապետը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում վարչապետի աշխատակազմի հանրային ծառայության այլ պաշտոններում և ազատում այդ պաշտոններից:

10. Վարչապետի աշխատակազմը հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Վարչապետի աշխատակազմն ստեղծվում և վերակազմակերպվում է վարչապետի որոշմամբ: Վարչապետի աշխատակազմը գործում է օրենքների, Կառավարության աշխատակարգի և իր կանոնադրության

հիման վրա: Վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը հաստատվում է վարչապետի որոշմամբ:

11. Վարչապետը Կառավարության աշխատակարգով սահմանված կարգով ապահովում է հանրությանը Կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար փոխանցումը:

11.1. Վարչապետն իրականացնում է «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով իրեն վերապահված վերահսկողական լիազորություններ՝ Պետական վերահսկողական ծառայության միջոցով:

12. Վարչապետը սահմանում է իր բացակայության ժամանակ փոխվարչապետներից մեկի կողմից վարչապետին փոխարինելու կարգը, այդ թվում՝ վարչապետին փոխարինող փոխվարչապետի լիազորությունների ծավալը: Այդ կարգով պետք է սահմանվի նաև վարչապետի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքում փոխվարչապետներից մեկի կողմից վարչապետին փոխարինելու կարգը:

13. ***(մասն ուժը կորցրել է 08.05.19 ՀՕ-31-Ն)***

14. Վարչապետի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության մասին որոշումը կայացնում է Կառավարությունը՝ Կառավարության անդամների ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով:

15. Վարչապետն իրավասու է օրենքով սահմանված դեպքերում և կարգով իր նախաձեռնությամբ վերանայելու նախարարների և վարչապետին ենթակա մարմինների ղեկավարների որոշումները:

16. Վարչապետն իրավասու է կազմավորելու խորհրդակցական մարմիններ, որոնց ղեկավարումը կարող է հանձնարարել համապատասխան փոխվարչապետին:

16.1. Վարչապետն իրավասու է ձևավորելու միջազգային դատարաններում դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողով և հաստատելու դրա աշխատակարգը, ինչպես նաև հաստատելու միջազգային դատարաններում դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հաստատելու կամ մերժելու ընտրության արդյունքով հանձնաժողովի կազմած թեկնածուների ցուցակը:

17. Վարչապետի նստավայրը Երևան քաղաքում է:

***(7-րդ հոդվածը լրաց., փոփ. 08.05.19 ՀՕ-31-Ն, լրաց. 07.07.22 ՀՕ-335-Ն, 13.07.23 ՀՕ-252-Ն)***

Հավելված
«Կառավարության կառուցվածքի և
գործունեության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

## ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

17. Ֆինանսների նախարարությունը մշակում և իրականացնում է հարկաբյուջետային՝ պետության եկամուտների ձևավորման և ծախսման, հանրային ֆինանսների կառավարման, այդ թվում՝ բյուջետային գործընթացի կազմակերպման, ներքին ֆինանսական հսկողության (ներառյալ՝ ներքին աուդիտի), գնումների գործընթացի պետական կարգավորման և համակարգման, ~~ֆինանսաբյուջետային վերահսկողության,~~ պետական պարտքի կառավարման, հաշվապահական հաշվառման, աուդիտորական գործունեության, խաղային գործի, ինչպես նաև ֆինանսատնտեսական, վարկային, ֆինանսական շուկայի միասնական քաղաքականության մշակման և իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովման, համայնքային բյուջեների եկամուտների ձևավորման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը: